

ԱՅՅ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

(հայ տուրիստի յիշողութիւններից)

ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆՑԻ

III.

ՏԱՄՆՈՒԹ ՕՐ ԿԱՐԻՆՈՒՄ

...Բնակեալ է կեանս իւրեանց
երբեւ է թանձըամած խաւարի
և ողբեքն արգելեալք ի մազմի
երբեւ զկենդանի է գերեզմանի...

ԵՂԻՇԵ:

(Նարունակութիւն 1)

Նոյեմբերի 5-ին առաւօտեան, երբ բարձրացաց թէյարան-ընթերցարանը, այստեղ գտաց նստած արդէն մի քանի հոգի: Այդտեղ էր թաղիս երկու բոլիս-էվիէնդիներից մինը՝ Մուրադը՝ նիհար, շիկահեր, սակաւախօս մի տաճիկ: Դորա կողքին նստած էր կարինի հայերի մէջ հռչակաւոր մատնիչ Պօղոս Սարաֆեանի մի աչքով կոյր որդին, որին ժողովուրդը ծածուկ «Աւասակի» տղայ, մատնիչի զաւակա անուններն է տալիս: Բիլիարդի սեղաններից մէկի մօտ խաղում էին երկու երիտասարդներ, մինը՝ հայ, միւսը՝ տաճիկ: Այդ վերջինը կանացի պճնասիրութեամբ էր հագնւած և... «օղանո-ներից էր:

Կամաց կամաց լնթերցարանը լքցւում էր: Առհասարակ հիւրերը իրար հետ վարւողութեան մէջ քաղաքավարի էին. հայերը

1) Տե՛ս «Մուբեաց-ի 4, 5 և 7 համարները»:

ամեն բանում աշխատում են զիջանել տաճիկներին, չը հակառակել։ Կարինի թուրքերն էլ աւելի աշխարհ տեսած լինելով՝ քաղաքականութիւնից էլ քիչ-միչ տեղեկութիւններ ունին. նրանք տեսան ներսէսի օրով հայերի յառաջադիմութիւնը և աւելի պատկառանքով սկսեցին վերաբերւել դէպի հայերը, վախենալով որ սուր յարաբերութիւնները առանձին դէպքեր յառաջ բերեն։ Ահա՛ ինչու համար Կարինում այնքան աչքի չի ընկնում հայերի և տաճիկների մէջ եղած ատելութիւնը։

Ես պէտք է գնայի հեռագրատունը։ Յովհաննէս աղան խոսացաւ ինձ ցոյց տալ ճանապարհը. բայց որպէս զի պօլիցիականները չը կասկածեն իւր վերայ՝ իբրև մի տաճկահպատակի, որ ոռւսահայի հետ մտերիմ է՝ մօտեցաւ Մուրադին և Ալի-էֆէնդուն, որ նոր էր ներս մաել, և յատնեց նրանց, թէ պէտք է ինձ հետ հեռագրատունը գնայ՝ ճանապարհ ցոյց տայ։ Այդ խօսակցութեան ժամանակ ես էլ մօտեցաց բօլիս-էֆէնդիներին և կրկին ցիշեցրի Ալիին, որ անցաթուղթս բերի։

—Դուք ինքներդ գնացէք սէրայը և վերցրէք, ասաց նաև

—Ո՛չ, ես շեմ գնալ, դա իմ գործը չէ. եթէ վազն էլ չը վերադարձնէք, ես առանց անցաթղթի կը գնամ հիւպատոսարանը։

—Զա՞նմ, էսօր երեկոյեան գնացէք վերցրէք, էլի՛, պատասխանեց Ալին։

—Այդ ձեր պարտականութիւնն է և ես հարկաւորութիւն չունիմ անձամբ գնալու։

—Լա՛ւ, վաղը կը ստանաք, միջամտեց Մուրադը։

Հիւրանոցից դուրս գալիս Յովհաննէս աղան հասկացրեց, թէ ինչու պօլիցիան ձգձգում է անցաթղթիս վերադարձնելը. «Ա՛ռողենն, որ ինքդ անձամբ գնաս սէրայը, որ բաշ-բօլիսը քեզի տեսնէ, հարց ու փորձ անէ, իմանայ ով ես. կը կասկածեն։...

Մենք անցնում էինք նեղ, ծուռ ու մուռ փողոցներով, որոնց երկու կողմից շարւած էին փոքրիկ աներ, կրպակներ և արհեստանոցներ։ Խանութներում, ուր ծախւում են եւրոպական մանուֆակտուրային ապրանքներ, դարսւած էին և Հայաստանի գործւածներ՝ Բաղէշի կարմիր կտաւ, Վանի շալեր, Արաբկերի մանիսս (բամբակեայ գործւած), Խարբերդի գեազի (մետաքսէ գործւած) և այլն։

Առաջնորդարանի մօտից փողոցի ձախ ճիւղաւորութեամբ գնալիս՝ պատահում էք մի շարք արհեստանոցների, ուր կուղի, աղէսի, գացի և այլ գաղանների մորթիներից շինում են մուշտակներ։ Բարձր-Նազքը ունի բազմաթիւ թանձրամորթ զաղաններ, որոնց մորթիները մինչև անգամ արտահանում են Ռուսաստանի Նիժնի-Նօվգորոդեան տօնավաճառք։

Կրպակների շարքում աչքի էր ընկնում մի մեծ ամբարանման-քարեաց շինութիւն, լայն բացւած դարբասներով։

—Առ խանում կը կինայ Ալեքսանդրապոլցի հարուստ վաճառական մը՝ Մ. աղա Զ.՝ որ Կարին կաշիի մեծ առուտուր կը նէ։ Կը ճանչնա՞ք զանիկա, հարցրեց Յովիշաննէս աղան։

—Լսել եմ նորա մասին, իսկ անձամբ ծանօթ չեմ՝ պէտք է նորան տեսնեմ, դործ ունիմ։

—Մ. աղան Սանասարեան վարժարանի պատւաւոր հոգաբարձու է, նկատեց առաջնորդաւոր։

—Աւելի լաւ. հետը միասին կը գնամ վարժարանը։

Հաննելով մի կեղտոտ հրապարակ, նման հիւրանոցի առջեւը գոյըն-ւածին, մենք ծուեցինք. ձախ և դուրս եկանք մի նեղ փողոց, որի երկու կողմից շարւած էին ողորմելի տնակներ։ Աջ շարքում մի սպիտակ փոքրիկ շինութիւն էր երևում հարթ կոռուրով. դա պօստ-հեռագրատունն էր։ Փայտեայ խարխուկ սանդուղքներով զդուշութեամբ բարձրացանք և մտանք մի նրբանցք, որը տարաւ մեզ մի նեղ, լուսամուտներից զուրկ սենեակ։ Թէ նրբանցքը և թէ սենեակը հողայատակ էին և ցեխով ծեփած պատերով։ Դէմ ու դէմ պատի մէջ, իրար կողքի երևում էին երկու մեծ ծակեր. մէկից՝ ներքին կացերութեան հեռագիրներ էին ընդունում, միւսից՝ նամակներ։ Որովհետեւ հեռագիրս Ռուսաստան պէտք է ուղարկեի, ուստի պէտք է զիմէի արտաքին հեռագիրներին յատկացրած բաժանմունքը։ Բացանելով ձախ կռան վերայ երևացող մի փոքրիկ դուռ, մտանք արտասահմանի հեռագիրներ ընդունելու բաժինը։ Դա մի շատ փոքրիկ սենեակ էր, որի կէսը բանած էր մի թախտ միւթաքաններով։ Հակառակ կողմում մի փոքրիկ սեղան էր, իսկ սենեակի մի անկիւնում, յատակին ածած էին պաշտօնական թղթեր և ծառայողի շորերը։ Անենեակում կարող էին իրար ճեղքելով կանգնել չորս-հինգ հոգի։

Դրան մօտ մեզ հանդիպեց 15 տարեկան մի յոյն պատանի, լայն երկար շալւարով և մեծ հողաթափներով։ Նրա հեռագիրը աւել իրան (ուրիշ մարդ չէի տեսնում բաժանմունքում), նա ասաց։

—Սպասէ՛ք, դեռ էֆէնդին չի եկել տնից։

Խնչ պէտք էր արած։ Նստեցի ու սպասեցի մինչև «թել զարկող, էֆէնդին բարեհաճի շնորհ բերել իւր պաշտօնը կատարելու։ Մօտ 20 րոպէ սպասեցի։ այդ ժամանակամիջոցում պօստ-հեռագրատունը միմիայն 3 մարդ այցելեցին։ Տաճկաստանը, իրրեւ քաղաքակըրթութիւնից բոլորովին յետ ընկած երկիր, չ'ունի պօստ-հեռագրական մեծ պահանջ։ Ամենականոնաւոր պօստային հաղորդակցութիւնը Տրավիզոնի և Կարինի մէջ է, այն էլ շաբաթը մի անգամ է ստացում և գնում պօստը, որը տանում է մի ձիաւոր սուրհանդակ, նամակներով ու ծրաբներով տոպրակները դցած իւր հեծած ձիու վերայ։ Երզրումից Թիֆլիս նամակը հասնում է երկու շաբաթում։ Այդ դեռ Կարինից է այցպէս։ բայց երևակացեցէք Հայաստանի խորքերը՝ Վան, Մուշ, Տիգրանակերտ, Խարբերդ՝ դրանք համարեա աշխարհքից կտրւած անկիւններ են։ Ի՞նչ ուզում ես կատարիր այնտեղ, հազարից մէկ զոհի հառաջանքը չի հասնի լոյս աշխարհ...

Վերջապէս «թել զարկող էֆէնդին» բարեհաճեց գալ և ընդունել իմ հեռագիրը։ Այդ յոյն պաշտօնեան, ինչպէս և պօստ-հեռագրատան միւս ծառայողները, չ'ունէր հագին պաշտօնազգեստ։ ով ինչ ուզում է՝ հագնում է։ Էֆէնդիս երկոպական վերարկու ունէր հագին, որի տակից երեսում էր տաճկական լայն շալվարը։ Ամեն տեղ սովորութիւն է, որ, հեռագիրը ընդունելիս, անդորրագիր են տալիս, բայց Տաճկաստանում հարցնում են։ Հանդորրագիր կամենումէք է. եթէ այս՝ գնացէք գնէք մի 10 փարանոց նամակադրոշմ։ Կատարեցինք հրամանը և ստացանք անդորրագիրը՝ վրան նամակադրոշմ կպցրած։ Տաճկաստանում պաշտօնական թղթերը, կնիքները և այն, կէսը տաճկերէն է դրւած լինում, կէսը Փրանսերէն։

Պօստ-հեռագրատնից վերադառնալիս մտայ Մ. աղա Զ.-ի մօտ, որի սենեակը վերոցիշեալ խանի մէջ էր։ Լոյս, մաքուր, փոքրիկ սենեակում, զրասեղանի առջև նստած էր մօտ 55 տարեկան մի յաղթանդամ մարդ, կովկասեցի հայ-վաճառականի հագուստով։ Նա, ինձ տեսնելով, հաշիւները մի կողմէ ծալեց, բարեւց ինձ և պատերեց

ծառային մի մի ֆինջան ղայֆէ բերել «անուշով» (շահաբան):
Մի քանի հարց ու փորձից յետոյ, երբ նա իմացաւ իմ Տաճ-
կաստան գալուս նպատակը, խորհրդաւոր կերպարանք ընդունեց ու
ակսեց.

— Ե՞հ, ինչի՞դ է հարկաւոր իմանալ երկրի, ժողովրդի դրութիւնը...
ի՞նչ բան ունիս. քեզ ի՞նչ սրանց դրութիւնը, ուսումնարանները...
այդ քեզ բոլորովին հարկաւոր չի... Իմ բարի խորհուրդս է, քանի
որ մի փորձանք չի պատահել զլիիդ, շուտով վերադառնաս, ինչ տե-
սել ես բաւական է... դու ջահել ես՝ օամանցուն չը գիտես, իսկ
ես երկար ապրել եմ, զիտեմ ի՞նչ է այստեղ կատարւում... Ոշինչ
չես կարող անել... Ես քսան տարի է գալիս եմ գնում, ինձ այստեղ
ամեն մի լակու անդամ ճանաշումէ, բայց էլի մինչև անդամ ինձ վերայ
էլ են կասկածում... Ամեն ոռուահայ և ամեն մի տաճկաստանցի,
որ ոռուաց հիւպատոսարանն է գնում՝ կասկածելի է: Հիմա կար-
ծում ես, որ այստեղ բոլոր հայերը արդէն չը գիտե՞ն քո մասին.
շատ լաւ գիտեն և շատ կ'ուզենացին ծանօթանալ, հիւրասիրել
քեզ, բայց կառավարութիւնից երկիւղ են կրում. նրանք ստիպւած
են քեզ հետ ոչ տեսնել, ոչ խօսել. և աշխատում են ձեւացնել, որ
բոլորովին չեն էլ նկատում քեզ... Բոլորովին խորհուրդ չեմ տալիս
կարինից ուղերդել դէպի Մուշի կողմերը. հաւատացած կացի՛ր, որ
կէս ճանապարհին կը բռնեն, կը բանառիկեն և կ'արգելին մի քայլ ան-
դամ անել. իսկ նրանց, որոնք քեզ հետ կը խօսեն, կը տեսնեն՝ այնքան
կը տանեն կը բերեն, որ հոգիները դուրս կը դայ:

— Ենորհակա՛լ եմ ձեր խորհուրդների համար. յետոյ անելիքս
գեռ կը տեսնենք, ասացի ես, չ'ուզենալով երկար վիճել. բայց հի-
մա ես ինդրում եմ օգնէք ինձ տեսնել Սանասարեան վարժարանը:

— Ի՞նչ բան ունիս. ի՞նչ կայ տեսնելու:

— Ինչպէս թէ ինչ կայ տեսնելու. գալ կարին և չը տեսնել Սա-
նասարեան վարժարանը...

— Դէ՛, լաւ, Յ. Մաղաթեանին այսօր կ'ասեմ:

Դուրս գալով փողոցը՝ պատահեցի Մուրադ էֆէնդուն, որ իրան
ձեւացրեց իրբե թէ ինձ չէ նկատում: Մի քանի քայլ հեռանալով, ես
յանկարծակի յետ նայեցի և չը կարողացայ ծիծաղս պահել, երբ տե-
սայ թէ ինչպէս տնաքանդը հեռուից քայլ առ քայլ հետևումէ ինձ:

ձաշել էր և մտել սենեակս։ Հաջի-Ղազարը եկել էր «սօբատ վառելու»։ Այդ խարտեաշ մշեցին մօտ 35 տարեկան միջահասակ մի մարդ էր, դանդաղ թէ շարժւելում և թէ խօսելում։ Նա հաւատարիմ էր և աշխատասէր։ Խօսում էր մշեցիներին յատուկ առողանութեամբ, խառնելով ամեն մի նախադասութեան մէջ անթիւ տաճկերէն բառեր։ Ղազարը ինձ հետ շատ մտերմացել էր. միշտ երբ դալիս էր «սօբատ վառելու», երկար մնում էր և զրից անում, նամանաւանդ երեկոները, երբ հիւրանոցը փակւում էր և այնտեղ մնում էինք ես ու ինքը. սակաւ էր պատահում, որ միւս համարներում էլ «միսաֆիր»-ներ լինէին։

Նա չէր կարող առանց հոգուց զմայլման մնաբերել Մուշի հողը, ջուրը, այդիները, օդը. նա չէր կարող առանց ցաւի և տիրութեան յիշել՝ թէ ինչ դէպքեր են տեղի ունենում Մուշում. «Քուրդը կը թալնէ, ասում էրնա, կը զարկէ, կ'այրէ, գէշութիւններ կընէ, կը նեղէ մեզի։ Պարտքի, սովի, քրդի ու տաճկի տւած նեղութենէն ժողովուրդը կը գաղթէ, կերթայ օտար երկիր, մշակութիւն կենէ, իր գլուխ կը պախէ»։

Քաղաքներում ապրող տաճիկ և հայ դրամատէրերն էլ իրանց վաշխառուական ցանցերում միւս կողմից են տանջում ժողովուրդը։ Գիւղացին ահագին տոկոսներով փող է վերցնում և դրաւ է դնում աղա ու էֆէնդիների մօտ իւր հողերը, լծկանները, տունը։ Ի հարկէ, սարսափելի տոկոսները անկարող է լինում վճարել. բոլոր դրաւ դրածը դառնում է փողատէրի սեպհականութիւն. իսկ գիւղացին, զրկելով ամենից, իւր հողի վերաց դառնում է «միրիբա», մի վարձկան, որը մի փոր հացի համար չարչարում է, հերկում, ցանում, հնձում ու կալսում և, ամեն բան պատրաստելուց յետոյ, աղան հանգիստ իւր համար դալիս է արդինքի կէսը տանում։ Աղան միայն մասնակցում է նորանով, որ տալիս է սերմնացուն, գործիքները ու տաւարը. եթէ վնասւած բան է լինում գործիքներից կամ տաւարից՝ վնասը աղան հաշում է և վնասի կէսը «միրիբայից» առնում։ Այդպիսով գիւղացուն իւր աշխատանքից մի քանի կօտ ցորեն ու գարի է մնում։ Այդ էլ դալիս են «աշար» (բերդերից հարի) վերցնում, իսկ գիւղացուն ու իւր ընտանիքին մնում է իւրանց մատերը լպսուել, կամ գլուխ վերցնել, դիմել մաշող պանդխտութեան։ Զարմանալի՛ ժողովուրդ».

այդքա՞ն թշւառութիւն, անպատճութիւն ու տանջանք կրում է գրաստի համբերութեամբ. ինչքա՞ն կեանք քարշ տալու ցանկութիւնը մեծ է նորա մէջ... Կառավարութիւնը ևաշարը ինքը չի հաւաքում, այլ՝ հաշւելով որ, դիցուք, այս ինչ դաւառը պէտք է այսպիս սօմար ցորեան, գարի և այլն տայ՝ ժողովելու իրաւունքը ծախում է այս կամ այն վաճառականին և իւր սուանալիք հարկը փողով առաջուց առնում: Վաճառականն էլ, ի հարկէ, աշխատում է հարկը այնքան հաւաքել, որ և՛ իւր տւած փողը դուրս դայ և՛ աւելանայ. եթէ ոչ, էլ ի՞նչ առուտուր է: Այսպէս էլ է պատահում, որ այդ իրաւունք ձեռք բերողը աշխատանքով իսկոյն ծախում է մի ուրիշին, որը եթէ կարողանում է նոյնակս ինքն է անում: Այսպիսով բացի «կայսերն կայսեր» բաժնից, հարկի վերայ բարդում են և այդ ամիլթէզիմներին (էտաղալով հարկ ժողովով) գրպանի համար մի խոշոր մաս. ուրիշն հասարակ ժողովուրդը ոչ թէ տալիս է օրէնքով սահմանած 8-ից—1, այլ 8-ից—2: Այդ տասանորդ հարկը («շաբ»), որ օրէնքով առաջ $10^{\circ}/_0$ էր, հիմա $12^{1}/_2^0/0$ ՝ հաւաքելու ձերի շնորհիւ, դաւնում է $25^{\circ}/_0$ և աւելի:

Դեռ չեմ հաշում՝ բազմաթիւ. միւս հարկերի և զեղծումների մասին. դորա վերայ աւելացրէք քրդերի մշական աւերումները և սպանութիւնները... Տնտեսական թշւառութիւնը սովորում է դիմել պանդիստութեան և գաղթականութեան. անապահով ու անկարգ դրութիւնը և հարստահարութիւնները մեռցնում են ժողովուրդը բարոյապէս...

— Հաջի՛ Ղազար, ինչո՞ւ ձեզի քրդերը այնքան կը նեղեն, կը տանջեն և դուք բան մը չէք ընէ անոնց, հարցը ես:

— Մուշի դաշտին վրայ ապրող ժողովուրդը «խիեղճ» է, ոչ զէնք ունի, ոչ պաշտպան: Խայը զէնք կրելու խամար պիտի թուղթունենայ փաշացէն: Եթէ խայ մը մենակ ճանփա կերթայ և քիւրդեր կը յարձակին վրան, նա կոխւ կինէ, կը զարնէ, կը սպանէ քրդեր, չի վախնար որ մէկը գնայ գսնգուի. համա որ ընկերովի ըլլայ, խայը կը վախնայ զինքն պաշտպանել, զարնել, սպանել զքուրդն: ընկերները կերթան կը զրիցեն իրար մէջ, կը լսի կառավարութիւնը, զիսայն կը բռնեն բանս կը դնեն, փաշայի մօտ կը տանեն, կը բերեն, կը չարդեն և յետոյ կը տան զամբթիւներուն, որ տուն հասցնեն. անոնց էլ ծա-

ծուկ կրսեն, որ զարնեն սպանեն զնա: Քիւրդերն ալ անոր լնտանիք, աղջականներ բիւթիւն կը մորթեն: Ամա սարցի խայեր քաջեն. քիւրդ և տաճիկ անտնցմէ կը վախնան: Շէնիկ, Սեմալ, Գալիդան գիւղեր կան Մշու կողմերը. անտեղի խաչ ժողովուրդը շատ քաջէ, միայն խայերէն լեզու կրխօսի, պասը պինդ կը պախի: Անոնք չեն թողնի, որ տաճիկ մը կամ քիւրդ վնասի իրենց: Եթէ նրանցմէն զմին քրդեր զարնեն սպանեն, առ խայերը մէկի տեղ 50 քիւրդ կը ջարդին: Եթէ խաչ մը փախաւ կառավարութենէն անոնց մօտ, նրանք կը պախեն իրանց քով, զանիկա չեն մասնի: Անոնք սուտ խօսել չեն դիտի. կառավարութեան խարջ տալէն չեն թողնի որ տաճիկը կենաչ խամրէ իրենց ոչխարներ. իրենք կրսեն՝ այսքան զլուխ ոչխար ունինք, այսքան պիտի խարջ տանք, առէք զնացէք. և տաճիկներ կը խաւատան, չեն խառներ անոնց գործերի մէջ:

—Այ, դուք էլ եթէ այլպէս լինէի՞ք:

—Մենք դաշտի մէջ ենք, չենք կրնար. անոնք անառիկ լեռների վրայ, մեր աչքը վախեցրեր են...

—Բայց ձեր կողմերում ուսումնարաններ, վարժապետներ չը կա՞ն:

—Ե՛հ, էֆէնդմ, երբ Սարքեան էֆէնդին կէր, լաւ ուսումնարաններ բացեր էր. զնա բռնեցին, Ստամբուլ տարան, ուսումնարանները աւրեցան, վարժապետները վախկոտացան: Ստամբուլի Միացեալ ընկերութիւնը կը պախէ Մուշի քաղաքի մէջ մանչերի ու աղջկերանց խամար դպրոց մը: Մշոյ դաշտի չորս, խինդ գիւղում էլ կան ուսումնարաններ, խիեղճ վիճակի մէջ են: Ճիզուիթները կաշխտեն վարժարաններ բանալ, կառավարութինը անոնց կ'օգնէ....

—Հաջի՞, այ հաջի... հաջի՞-Ղազար, կանչեցին դրսից: Եւ մշեցին շտապեց դուրս գնալ և այլպէս մեր խօսակցութիւնը ընդհատւեց:

* * *

Կիւրակի օրը, նոյեմբերի 6-ին, առաւօտեան ժամի մօտ 11-ին, ես դուրս եկայ հիւրանոցից ու դիմեցի Մ. աղայի մօտ, որի հետ միասին գնացինք Սանասարեան վարժարանը:

Մտնելով վարժարանի ընդարձակ բակը, որի մէջ տեղում կանդնած է նախկին աղջկանց ուսումնարանը, այժմ Սանա-

սարեան վարժարանի մի մասը, մենք դիմեցինք աջ՝ դէպի բակի մի անկիւնում գտնւող երկյարկանի փոքրիկ նոր շինութիւնը, որի նախասենեակի ու հիւրասենեակի հետ արդէն ծանօթացել ենք; Նախասենեակի մի անկիւնում երևացող մաքուր աստիճաններով բարձրացանք և հասանք սանդուղքների վերը: Մ. աղան բացեց մեծ երկփեղիեաց սիրուն գոներից մինը և մենք մտանք մի գեղեցիկ, իստակ, լոյս, եւրոպական կօմֆօրտով բաւական շքեղ կահաւորած սենեակի: Մարդ մի առժամանակ մոռանում էր, որ գորնում էր Տաճկա-Հայաստանում, Կարինի մէջ. կահկարասիքը, շրջանակները, պատկերները, ծանր վարագոյները, գորգերը և այլն, բոլորը եւրոպական ճաշակով էր: Սենեակի մէջ տեղում, փափուկ գահաւորակի առջև, դրած էր մի կոլոր սեղան թանկագին սփռոցով ծածկած, սեղանի վերաց գեղեցիկ լամպա և մանր-մունր առարկաներ:

Գահաւորակի վերաց բազմած էր մի ֆէսաւոր պարոն գերմանացու դէմքով, իսկ մեզ տեսնելով տեղիցը վեր կացաւ և դիմաւորեց մի թիւմօրուս, երկարահասակ կապոյտ ակնոցաւոր երիտասարդ: Պ. Զ.-ը մեզ ծանօթացրեց: Դա պ. Պ. Աբուլեանն էր, իսկ գահաւորակի վերաց բազմածը՝ պ. Ս. Սողիկեանը: Այդ երկուսը մեզ արդէն ծանօթ Յ. Մաղաթեանի հետ միասին կազմում են Սանասարեան վարժարանի եռաւետեսչութիւնը, եթէ կարելի է հռոմէական տորիում-վիրատո խօսքի անալոգիացով այսպէս ասել: Երեքն էլ իրանց ուսումը վերջացրել են Գերմանիացում: Դրանց մէջ գերիշխողը և գործերի վերաց ազդեցութիւն ունեցողը Յ. Մաղաթեանն է երկում:

Մեր խօսակցութիւնը արդէն կապել էր, երբ ներս մտաւ և պ. Յ. Մաղաթեանը: Նա շտապեց ներողութիւն խնդրել, որ այն օր այնքան անքաղաքավարի, սառն կերպով ընդունեց՝ ասելով. «Թիւրքիայում դրութիւնը և պայմանները այժմ այնպէս են, որ եթէ մի քանի րոպէ աւելի սպասէին ձեր ձիերը մեր դարբասների առջև և դուք աւելի մնացիք մեր վարժարանում, պօլիցիան իսկոյն և եթպիտի շրջապատէր ամբողջ ուսումնարանը»:

Տեսնելով որ առհասարակ մի առանձին թերահաւատութեամբ և կասկածանքով են վերաբերում դէպի ինձ, ես հարկաւոր համարեցի մեկնել իմ ճանապարհորդելուս նպատակը, պատճառը, որ յանհարծակի Կարին եկաց, փոխարէն սկզբից Վան գնալու և մտադրու-

թիւնս՝ ճանապարհս շարունակելու Մուշի կողմերը։ Ես յայտնեցի իմ կարծիքը, որ անհրաժեշտ է ոչ միայն պօլսեցիների համար և չքով տեսնել, ականջով լսել։ Թիւրքահայաստանցուն, այլ և ռուսահայերիս համար հարկաւոր է Թիւրքաց-Հայաստանի հետ ան միջապէս ծանօթանալը և նորա մասին ճիշդ տեղեկութիւններ ու գաղափար ունենալը։ Սանասարեանք չին համակրում այդ կարծիքին և յարտնում էին իրանց դժգոհութիւնը, որ ռուսահայերը և եւրոպական հայ գաղթականութիւնը խառնում են թիւրքահայերի գործերում։ Եւրոպացում նատած ազատ խօսում են, աղմուկ հանում, իսկ տուժումէ այստեղ ժողովուրդը և տաճիկների ճնշումը ու կասկածանքը դոցա շնորհիւ աւելանում։ Ես ասացի, թէ Թիւրքա-Հայաստանի վիճակով իրաւոնք ունի հետաքրքրւել ամեն մի հայ, մասնաւանդ ռուսահայերը, որոնք իրանց մտաւոր, բարոյական և նիւթական զօրութեամբ անհամեմատ բարձր են թիւրքահայերից, և կարող իսկ ինչ վերաբերում է եւրոպաբնակ հայերին, թէև, ի հարկէ, պախարակելի է նրանց լոկ աղմուկներ հանելը առանց գործ կատարելու, կ ազմակերպւելու, բացց, այնու ամենայնիւ, վնասակար չեմ գտնում նրանց արդարացի բոլոքները և հրապարակ հանելը Հայաստանի ցաւերը ու թշշառութիւնը...

Սանասարեանք բոլորվին։ համակրում էին Յարութիւն պատրիարքի շրջաբերականին, որով նա համոզում էր թիւրքահայերին՝ հրաժարւել եւրոպաբնակ խոռվարար հայերից, նզովել նրանց, որոնք ուրախութիւն, բարօրութիւն և երջանկութիւն չեն տեսնում վշտի, թշւառութեան, աւեր ու զրկանքների երկրում։ Նա հրաւիրում էր իւր ժողովրդին, որի հազարաւոր թշւառ, վտարանդի, յուսահատ զաւակներին տեսնում էր պատրիարքարանի շուրջը՝ թափւել եկեղեցիները, ծնկաչոք մաղթանքներ կարդալ առ Բարձրեալն վասն կենաց հայրախնամ օգոստավիառ։ Սուլթանին և նորան շրջապատող մեծամեծներին, որոնք օր ու գիշեր մտածում են, հոգս են տանում իրանց սիրած հայ ազգի մասին...

Սանասարեանք իրանց աշխարհայեցողութեամբ պատկանում են այն կուսակցութեան, որին մեր մէջ կարելի է լնդհանրապէս վսոհեմներիս անունը տալ. դրանք ներսէս—Խրիմեան—Շահվիթ-ական ձգումների դէմ են... Խոհեմները համոզած են, որ կրակից ազատ-

ւելու համար՝ պէտք է նետւել բոցի մէջ։ Խոհեմները պառաւ մարդկանց պէս զանգաղիոտ, կասկածու և ողերուելու անընդունակ մարդիկնեն։ Նրանց զգուշութիւնը վախկուութեան է համառմ, քարոզած համբերութիւնը՝ անբարոյականացնող, մեռցնող ստրկահոգութեան...

Սանսարեանք լաւ տեսնում էին երկրի դրութիւնը. իրանք դիտէին, որ Հայաստանի աշխարհագրութիւնը և պատմութիւնը արգելած է աւանդել ուսումնարաններում, որ համարեա ամեն մի տպւած գրքի մուտք Հայաստան խափանւած է, որ Աւգերեանի առձեռն բառարանի և Շարականի պէս անմեղ գրւածքներ բռնւումեն, իրեւ վեասակար և ժողովուրդը գրգուղ գրքեր, որ բանտերում տառապում են բոլորովին անմեղ մանուկներ, որ իրանք քաղաքական, հասարակական գործերում խառնւելուց բոլորովին հեռու լինելով և վալիների ու փաշաների վատահութիւնն ու յարգանքը վայելելով հանդերձ, պարտաւորւած են այնու ամենայնիւ պատւել, շողոքորթել Պօղոս Սարավիեանների պէս մատնիչներին, յարմարւել նորա պէսների ցանկութեան։ Նրանք չէին կարող չը տեսնել երկրի տնտեսական վարթար վիճակը, մտաւոր խաւարը, բացց այնու ամենայնիւ նրանց ջղերը այնքան բթացել էին, որ նրանց այդ չէր վրդովեցնում, և նրանք հանգիստ ու խաղաղ ասում էին. «Այդ բոլորը ժամանակաւոր է... մենք չենք ուզում, բացի մեր դասերից ու ուսումնարանից, ուրիշ բան ճանաչել։ Մենք կղզիացած ենք ժողովրդից։ Տաճկա-Հայաստանի բաղդը կախւած է մեր վարժարանից։ Միակ սուրբ, նւիրական մեծ բանն է Տաճկա-Հայաստանում մեր վարժարանի գոյութիւնը։ Ուսուցանել մեր աշակերտներին ինչ որ գիտենք և բոլորովին կղզիանալ մեր վարժարանում, ողահպանելով միմիայն կապ տեղիս բարձր շրջանների հետ—ահա՛ մեր իդէալը։ Պահանջները շատ են և մենք բոլորին պէտք է գոհացում տանք։ Մեր նպատակն է նախ և առաջ Թիւրքիայի համար լաւ քաղաքացիներ (?) պատրաստել։ Մենք ուզում ենք միջոց տալ մեր սաներին մրցելու ապրուսոի կուի մէջ մեր երկիրը թափւող եւրոպացիների հետ, պատրաստելով արհեստաւորներ, ֆրանսերէն իմացող գործակատարներ, տէրութեան բարձրագոյն (!) վարժարանները մտնելու համար աշակերտներ, որոնք դուրս գային դեղագործներ, բժիշկներ և այլ ծա-

ռազողներ: Մենք դանդաղ ենք քայլում, բայց մանկավարժութեան մէջ հետեւում ենք եւրոպական գիտութեան վերջին խօսքին...»

— Հայաստանում վարժապետներ չը կան, քահանաները և վարդապետները զարհուրելի տգէտ են, նկատեցի ես:

— Այս՝ պահանջները շատ են և մենք պէտք է ամենին գոհացում տանք: Մեր ուսումնարանը առ այժմ ունի 6 տարւայ դասընթաց. ներկայ ծրագրի ծաւալը հաւասար է ձեր բէալական ուսումնարանների 4 դասուան...

Խօսակցութիւնը դեռ շարունակուում էր, երբ Մ. աղան և աղ. Յ. Մադաթեանը վերկացան ու. հեռացան: Պ. Աբուլեանը հրաւիրեց զնալ ներքեւ՝ իրանց հետ ճաշելու, խօստանալով յետոյ ման ածել վարժարանում: Խջնելով ցած, մենք մտանք հիւրասենեակը, ուր սպիտակ սփռոցով ծածկած սեղանի շուրջը նստած էին հինգ հոգի վարժապետներ: Նրանք արդէն վերջացրել էին ճաշը: Բացի Յ. Մադաթեանից, որը պսակւած է, բոլոր միւս վարժապետները ճաշում են միասին, վարժարանում:

Ճաշի ժամանակ մեր խօսակցութիւնը գլխաւորապէս վարժարանի մասին էր: Մինչև այժմ Սանասարեան վարժարանը ուսումնաւարութիւր դեռ չի տևել: Ընդ ամենը պէտք է լինի թ տարւայ դասընթաց, այժմ դեռ 6-ը կայ: Աւանդուում են կրօն, բարոյագիտութիւն, հայերէն, ասճկերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ընդհանուր աշխարհագրութիւն, ընդհանուր պատմութիւն, թւաբանութիւն, երկրաչափութիւն և բնական պատմութիւն: Երեք տեսուչներից ամեն մինը, բացի իրանց առարկաներից, սովորեցնում են, մէկը՝ ջութակ ածել, միւսը՝ դաշնամուրի վրայ, երրորդը՝ կազմարարութիւն: Աշակերտաները բոլորը գիշերօթիկներ են: Մօտ 150 աշակերտ կար, որոնցից միայն 25 հոգի էին ձրիավարժ, միւսները՝ թօշակաւորներ: Վճարը տարեկան 25 ոսկի է (մօտ 235 բուբլի) — մի գումար, որ ճաճկաստանում բաւականին պատկառելի է համարում և ունեոր ծնողներին մատչելի: 25 հոգի ձրիավարժներից պէտք է հանել նոցա, որոնք ընդունւած են «բօլիդիգի» համար՝ մի քանի ազդեցիկ աղաների և էֆէնդիկների շաջակցութիւնն ու բարեկամութիւնը՝ շահելու նպատակով. մնացածը՝ ո՞րքանը չեմ կարող ասել, որովհետև Սանասարեանք շատ ժլառութեամբ էին ինձ տեղեկու-

թիւններ տալիս ուսումնարանի մասին՝ Հայաստանի զանազան տեղերից են և, երեխ, աղքատ ծնողների զաւակներ։ Կարինի հայ ժողովրդի մեծ մասը՝ չքաւոր լինելով՝ իւր որդիկերանց համար փակւած է տեսնում վարժարանի դուռը՝ մանաւանդ վերջին տարիներս՝ և անբաւական է այս վարժարանից, արտընջում է ու յետ պահանջում իւր շինութիւնը (բակի մէջ տեղում տեսածը), ասելով թէ՛ իւր որդիկերանց կրթութիւն տալու տեղ չ'ունի։ Թէկ պ. Մ. Սանասարեամբ իւր վարժարանի համար մեծ տարածութեամբ հող է գնել կարինում, սակայն տեղական վարչութիւնը թոյլ չի տալիս շինութիւն կառուցանել։ Հանգամանքները սահպում են մտածել վարժարանի ղեկավարներին՝ տեղափոխուել Խարբերդ։

Որովհետեւ կիւրակի օր էր և դասեր չը կացին, իսկ ինձ հետաքըրքում էր աւելի դասաւանդութեան եղանակը և աշակերտների ընդհանուր զարգացման աստիճանը, ուստի դիմեցի պ. պ. Աբուլեանին և Սողիկեանին, հարցնելով.—Կարելի՞ է արդեօք հասարակ օրերից մէկում ներկայ գտնեւել դասերին։

Մի քանի րոպէտ տիրեց խորին լրութիւն։ Բոլորեքեան նայում էին իրանց պնակների վերայ։

—Ո՞չ. վերջապէս ընդհատեց խորին լրութիւնը պ. Աբուլեանը։

Անյարմար էի համարում մեկնութիւններ իննդրել, այնպիսի ձեռով էր արտասանւած այդ ռոշուր։ «Ոչ»-ից յետոց մի քանի րոպէտ տիրեց կրկին լրութիւն, որը ընդմիջեց պ. Սողիկեանը, դիմելով վարժապետներին։ «Քալեցրէ՛ք պ...-ին վարժարանը»։ Իսկ ինքը և պարոն Աբուլեանը յայտնեցին, որ զբաղւած են և ժամանակ չ'ունին ինձ հետ գալ։ Էջմիածնի ճեմարանում աւարտած երկու վարժապետները և փականագործութեան ուսուցիչը «քալեցրին» ինձ։

Դասարանները և ննջարանները մաքուր, ընդարձակ ու եւրոպական ձեռով են։ Առ հասարակ, ինչպէս երևում է, բարեգործը ոչինչ միջոց չի իննայել իւր հիմնարկութեան վերայ։ Մի փոքրիկ թանգարանում ժողոված են մի քանի գաղանների և կարինի մօտ գտնող Նամրի թռչունների մորթպատիկները (պատո)։ Կան և մի քանի պատկերներ, ծովային կենդանիների կարծր մնացորդներ և այլն։

Անցնելով դէպի բակի մէջ սեղում գտնուող շինութիւնը, մտանք մի սենեակ, ուր մի քանի աշակերտներ ջութակի վերաց էին վարժուում. Նրանք ածեցին գերմանական նօտաներին նայելով մի եղանակ: Այդ սենեակից մտանք մի ուրիշը, որտեղ դրած էին մի քանի դաշնամուրներ: Աշակերտներից մէկին վարժապետները խնդրեցին «չակել» և նա «չալեց» մի գերմանական վայս:

— Իսկ հայերէն երգեր չը գիտե՞ն, հարցրի ես:

— Երբ գերմաներէն և լնդհանուր եւրոպականը կը սովորեն, հեշտ կը լինի իրանց համար և հայերէնը, հիմա չենք սովորեցնում:

Հասկանալի էր. Տաճկա-Հայաստանում բացի «Հայր-մերից» ուրիշ երգ չէր կարելի երգել հայերէն:

Դիմեցինք դէպի բակի մի ծայրում գտնուող առանձին շինութիւն՝ սեղանսատուն-դրադարանը: Գրադարանում ոչ մի հայերէն գիրք չը կար, բոլորը գերմաներէն և ֆրանսերէն. Հայերէն գրքերը դեռ գտնուում էին հիմնադրի մօտ՝ Պետերբուրգում, որովհետեւ ներկայ պայմաններում Թիւրքա-Հայաստան անկարելի է հայերէն գիրք մտցնել: Նոյն իսկ Պօլսի գրաքննութիւնից թող տւած գրքերը արգելում են Հայաստանի մէջ. Աւգերեանի առձեռն բառարանի պէս անմեղ գիրք վնասակար է համարւում: Մեղանատնից դուրս գալով դիմեցինք բակի մէջ գտնուող միջարկանի հասարակ շինութիւնը՝ արհեստանոցը, որը մի մեծ երկար սենեակ էր մի շարք սեղաններով, հարկաւոր մեքենաներով և փուքառվ: Մուտքի մօտ մի անկիւնում լւացւելու տեղն էր և մի պատից կախւած էին կարգով աշակերտների կապոյտ շապիկները: Ուսուցիչը ցոյց տւեց ինձ աշակերտների շինած մի քանի իրերը: Վարժարանում արհեստաները միմիայն ցանկացողների համար են և աւելի մի մարմանամարզական զբաղմունք, քանի կապական գործ: Հիւմնութիւն, փականագործութիւն և երկաթագործութիւն են սովորեցնում:

Խնչպէս մենք տեսանք, վարժարանի աշակերտների ահազին մեծամասնութիւնը ունեոր դասին է պատկանում: այնպէս որ հազիւթէ մէկը այդ աշակերտներից, աւարտելուց յետոց, սկսի արհեստով պարապել, այն էլ Տաճկաստանում, ուր տնտեսական պայմանները այնպէս են, որ մեծ պահանջ չը կայ զարգացած և կատարելագործած արհեստ-

ների, հետևապէս մեծ ձեռվ մի գործ սկսել չի կարելի և ունեող մարդիկ չեն պարապիլ գորանով. ուրեմն էլի կը մնայ նոյն աղքատ արհեստաւորների զաւակներին պարապել իրանց հօր գործով, միայն աւելի կատարելագործած միջոցներով... Դաշնամուր, ջութակ ածողը, ֆրանսերէն, գերմաներէն իմացողը, միջնակարգ կրթութիւն ստացածը և եւրոպական կօմֆօրտին ընտելացածը չի գնալ եզներ պայտելու, մեխեր շինելու... Որ ամեն տեսակ պահանջ շատ է—այդ չի նշանակում որ ամեն բան իրար խառնելով կարելի է գոհացում տալ ամենին: Արհեստաւորներին հարկաւոր է և յացոնի տեսակ, յայտնի չափով կրթութիւն, բոլորովին զատ ծրագրով: Կարինի ազգային վարժարաններում սովորում են չքաւոր դասակարգի զաւակներ, գլխաւորապէս արհեստաւորների. Նրանք, ստանալով ամենաստարական կրթութիւն, էլի վերազանում են իրանց հօր արհեստանոցը և պարապում նոյն գործով: Ահա՛, եթէ Սանասարեան վարժարանի չինական պատում մի անցք բացւի այդ մանուկների համար դէպի արհեստանոցը և այդ չքաւոր տղաներին միջոց տրւի սովորել վարժարանիս արհեստաների հմուտ ուսուցիչների մօտ՝ այն ժամանակ անհամեմատ աւելի օգտակար կը լինէր այդ արհեստանոցը Հայաստանի ժողովրդին, քան հիմա՝ լինելով ունեորների երեխայոց զւարձութեան առարկաց: Սանասարեան վարժարանը ոչ միայն ոչինչ չէր կրցնիլ, եթէ նորա արհեստանոցը, առանձին հիմնարկութիւն լինելով, մատչելի դառնար արհեստաւորների աղքատ զաւակներին, այլ և բաժանւելով արհեստանոցից աւելի որոշ ծրագիր կ'ունենար և այդ չէր խանգարի էլի իրանց ցանկացածին հասնել՝ ապատրաստել կրթւած քաղաքացիներա, «Պօլսի թիւրքաց բարձրագոյն ուսումնարանների համար ուսանողներ, ընկերութիւնների համար գործակատարներ և այն»:

Արհեստանոցից դուրս եկանք կրկին ընդարձակ բակը, ուր տնկւած էին մի քանի բարդի ծառեր: Բակում ձմեռը շինուում է աշակերտների համար սահելու տեղ: Բակի մէջ տեղում գտնուող շինութեան մօտից անցնելիս կրկին պատահեցի տեսուչներին և երկու վարժապէտ էֆէնդիներին խմբւած մի փոքրիկ արկդանման ջերմանոցի (օրանժերեա) մօտ: Այդ ծանօթ խմբի մէջ կանգնած էր ինձ անձանօթ լաղթանդամ մի սև մարդ. զա պ. ն. Մաղաթեանն էր, պ.

Յ. Մաղաթեանի եղբայրը, Վարագայ վանքի Հայրիկի նախկին երկրագործական ուսումնարանի տեսուչը։ Այդ վարժարանի փակումից յետոյ, նա եկել էր Կարին եղբօր մօտ՝ փոքրիկ ջերմանոցի վերայ հակելու։ Այդտեղ, ի միջի այլոց, վարունդ են ցանում և սուացած առաջին նուբարը մասուցանում վալի փաշալին և այլ մեծամեծներին ի վայելումն։ Ուրիշ տեսակ Տաճկաստանում անկարելի է...։ Անցնելով խմբի մօտով, պ. պ. տեսուչներին և վարժապետ Էֆէնդիներին մնաք բարով տւի և դիմեցի իմ երեք չիչերօնին երիս հետ դէպի դարբասը, որի մօտ իմ ուշադրութիւնը դարձրին մի կէս-օմնիբուս կէս-ֆուրդօնի ձև ունեցող կառքի վերայ։ Զիերօնիներիս ասելովը, այդ կառքը աշակերտներն են շինել և դորանով ամարանոց են գնում թէ իրանք տեսուչները ու վարժապետները և թէ աշակերտները։

Յայտնելով շնորհակալութիւնս պ. պ. ուսուցիչներին՝ դուրս եկաց մենաստան-վարժարանից։ Նատ բան դեռ ուզում էի իմանալ, շատ բան պարզել ինձ համար այդ ուսումնարանի մասին, բայց սառն ընդունելութիւնը, ուղիղ պատասխաններից խոյս տալը և վերջապէս լակոնական առչա-ը և չը ցանկանալը որ և է յարաբերութիւն ունենալ ինձ հետ—հարկադրում էին քչով բաւականանալ։ Ես շատ բան լսեցի այդ ուսումնարանի մասին ժողովրդի մէջ պտտող, բայց անկարող լինելով ստուգել՝ լուսում եմ։ Նաև իմ ահճական տպաւորութիւններս մեծ գգուշութեամբ աշխատեցի գրել, լոյս աշխարհ հանելով այն, ինչ բանի մէջ հաւատացած եմ և համոզւած։ Գուցէ գտնւեն մարդիկ, որոնք կարծեն թէ ես որ և է նշանակութիւն եմ տալիս ինձ արած ընդունելութեան։ — Ոչինչ, բացի այն որ բոլորը ինձ համար նշանակութիւն ունի, իբրև նոր ապացուց, իբրև լուսաբանումն Թիւրքա-Հայաստանում տիրապետող անտանելի պայմաններին մի կողմից և ղեկավարների, իմ կարծիքով, սխալ ուղղութեան՝ միւս կողմից։



Երեկոյեան, ընթերցարանից դուրս գալիս, ինդրեցի Յովհաննէս աղացին, որ մտնի իմ սենեակս, բան ունէի հարցնելու։ Նա ուրիշների համար անլսելի և աննկատելի կերպով շտապեց պատասխանել։

«Եթէ երեկոյեան փողոցում բօլիսների չը պատահեմ, և իսկոյն հեռացաւ, մօտենալով մի խումբ տաճիկների»:

Թիւրքաց-Հայաստանի ներկայ դրութեան պատճառներից մինը այն է, որ բարձր կառավարութիւնը անտեղեակ է հեռու, կենդրոնից անջատւած խորքերում կատարւող գործերին: Ուրիշ երկիրներում բարձըր կառավարութեան օգնում է դաւառական մամուլը, ուրը չը կայ Թիւրքիայում: Յոտար երկրացի ճանապարհորդներին է մնում կառավարութեան նպաստած լինել, ցոյց տալով տեղական վարչութեան սխալ և տէրութեան շահերին վնասող գործերը: Բերենք մի քանի փաստեր՝ ցոյց տալու համար տեղական վարչութեան բռնած լնթացքը: Զանազան ստահակ պաշտօնեաներին յաջողւթել է հաւատացնել Բ. Դրան, թէ հայերը գանգատուում են ոչ թէ այն պատճառով, որ ճշմարիտ որ քրդերից հարստահարւում ու նեղուում են, այլ ուղղում են յուղում, ապստամբութիւն յաւաջացներ: Եւ ահա վալիները ներկայացնում են երկրի դրութիւնը այնպիսի գոյներով, որ Ելդրզի պալատը, սխալի մէջ խրւելով, նրանց տալիս է բացառիկ իրաւունքներ «վսառնակութիւն»-ը արմատախիլ անելու...»

Այդ վալիները և փաշաները աչալուրջ երևալու համար և մեծ ծառայութիւններ անող՝ դիտմամբ են երկիրը այդպիսի դրութեան մէջ ցոյց տալիս Բ. Դրան, որպէս զի իրանց աւելի ևս իրաւունքներ տրւի իրանց քիմքի համեմատ վարելու այդ թշւառ երկրում: Նոքա չեն էլ մտածում, որ դորանով վնասում են իրանց կառավարութեան: Մի երկրում, ինչպիսին Թիւրքաց-Հայաստանն է, ուր ոչ մամուլ կայ, ոչ հասարակական կարծիք, ուր ոչ մի միջոց չը կայ՝ լսելի անել արդարադատութեան և բարձր կառավարութեան երկրի իսկական դրութիւնը, պաշտօնեաների բազմաթիւ զեղծումները, ժողովրդի կրած անքաւ հալածանքը—ի՞նչ ելք է մնում դուրս գալու այդ վիճակից... Նոյն իսկ եւ բոպական և ռուսաց հիւպատոսները այդ ամենը տեսնում են, ցաւում, հաղորդում իրանց կառավարութիւններին, իսկ Պօլսում չեն կամենում խաղաղացնել երկիրը, լսել հայերի արդար պահանջները:

Վալիները առաջարկում են արմատախիլ անել «խուվութիւնները և ահա՛ ինչ միջոցներով:—Ամբողջ Տաճկա-Հայաստանը, այսինքն՝ Երզումի, Վանի և Բաղէշի վիլայէթները պաշարման դրութեան մէջ

դնել. ամեն գիրք և լրագրի մուտք խափանել. մինչև անդամ այն գրքերը, որոնք Պօլսի տաճկական գրաքննութիւնից թոյլատրւած են, Հայաստան մտնելիս կրկին քննել. Ռաֆֆիի, Դամառ-Փաթիպալի, Վէշիկթաշլեանի, Դուրեանի և այլ գրւածքները, ինչպէս և հայ հին պատմազիրները, խստիւ արգելել: Նարականը հրատա- րակում է իրեւ վնասակար գիրք; որովհետեւ մէջը կան տաղեր՝ նւիրած ո. Վարդանանց և Ղեռնեանց. Աւգերեանի անձեռն բառարանը գրաւելում է իրեւ յուզող գիրք: Ընօլիսները այնքան վախենում են գրքերից, որ, երբ փողոցով մէջը անցնում է կուան տակին գիրք բռնած, նրանք մօտենում են, առնում, տես- նում և եթէ անվնաս են գտնում՝ յետ են տալիս, իսկ եթէ ոչ՝ տիրոջը տանում են «աէրալը»...

Արդարադատութիւն, այն մտքով, որ հասկանում է եւրո- պացին՝ Տաճկաստանում չը կայ: Թէև Տաճկաստանում երկու տեսակ դատարաններ կան՝ շէրիյէ—մուսուլմանների համար և նիզա- միյէ—քրիստոնեանների և մուսուլմանների ու քրիստոնեանների մէջ պատահած վէճերի համար, բայց երկրիս վարչական դրութիւնը այնպէս է, որ դատաւորները և վարչութիւնը ինչպիսի ընթացք ու- զենան կը տան գործին. Հին կարգ ու կանոնը, միայն ուրիշ ձևով, էլի պահպանւած է: Նէրիյէի դատաստանագիրքը Ղուրանն է իւր ֆէթւան երով (յօդւածներով). դատաւորները ուլեմներից (իր- նական գիտնական ք դուռակարգ) դուրս եկած կադիներն են, որոնց նշա- նակում է ու ընտրում շէլսիւլիսամը: Նիզամիյէ դատարանները իրանց կազմակերպութեամբ ու օրէնքներով փոխ են առնւած ֆրանսիակա- նից մի քանի տաճկացրած փոփոխութիւններով: Երկրիս ամեն մի վարչական բաժանմունք՝ նահիյէ, զէզէ, սանջակ, վիլայէթ՝ ունի իւր դատարանը, որի իրաւասութիւնը մեծ կամ փոքր է, նայած բա- ժանմունքի աստիճաննին: Այդ դատարանների մէջ անդամների ընտ- րութիւնը կախւած է վարչութեան ցանկութիւնից: Դատաւորներին ընտրում է և նշանակում վարչութիւնը: Խրաքանչիւր վիլայէթում կայ դատաստանական պալատ, որի նախագահը նոյն ուլեմների դասա- կարգից է և միշտ կարող է տալ գործին այն կերպարանքը, որ իւր թէ իսղիրը կրօնական է և շէրիյէի վերաբերեալ, ուստի պէտք է քննուի Ղուրանի յօդւածների համաձայն. և այդ շատ գիւրին է ա-

նել, քանի որ անորոշ են այն խսդիրները, որոնք պէտք է այս կամ՝ այն դատարանում քննւեն: Բացի այդ, նիզամիյէի օրէնքները, թարգմանուած լինելով ֆրանսիական օրէնսդրական գրքերից բարձր խրթին մձով—բոլորովին անհասկանալի են տաճիկ տղէտ պաշտօնեաներին, թէ լեզուի և թէ մաքի կողմից: չէ՞ որ այդ օրէնքները հասկանալու համար հարկաւոր է մի յայտնի զարգացում, կրթութիւն, որը ի հարկէ չ'ունին տաճիկ պաշտօնեաները: Եթէ մեր մաշաղիների ձեռքը տանք ֆրանսիական օրէնքները, թէկուզ թուրքերէն թարգմանուած, մի՞թէ նրանք կարող են կարգին դատաւորներ դառնալոնցնը և տաճիկների համար... Եւրոպական օրէնսդրութիւնը և կաղմափերպութիւնը կը պատւաստի Տաճկաստանում, երբ այնտեղ կը տարածւի Եւրոպական կուլտուրը, իսկ մուսուլմանութիւն և քաղաքակրթութիւն բառերը իրար բացասում են:

Քանի որ Եւրոպայից Փոքր-Ասիա ճանապարհը բռնում են տաճիկները, քաղաքակրթութեան մուտքը արգելւած է Փոքր-Ասիա և կարդ ու բարօրութիւնը չի կարող անցնել Բօսֆորից դէպի ասիական ափը: Մարդիկ են ստեղծում պայմանները. մինչև Փոքր-Ասիայում կը լինին տաճիկները; կը լինին և նրանց ստեղծած պայմանները: Կարդ ու կանոնը: Խնչպէս դժւար է, որ տաճիկները Մահմէդի տեղ Քրիստոսին պաշտեն, նոյնքան անհնարինէ, որ Եւրոպական քաղաքակրթութիւնը իւր կարդ ու օրէնքներով պատւաստի տաճկական կեանքում:

Բացի այդ ամենից, տաճիկները անզօր են քրդերին զսպելու: Այդ լեռնարնակ աւազակաբարոյ ցեղերի հետ կարելի է կուել միայն՝ տալով խաղաղ ժողովրդին տեղական սեպհական զինորական ոյժ, միջոց՝ արդարութեան և օրէնքների հիման վերաց պատճել չարագործութիւնները և, վերջապէս, երկրիս այն ազգութեան, որը ընդունակ է քաղաքակրթելու, տալ ազատ զարգանալու և լուսաւորւելու պայմաններ, որպէս զի նրանք այդ վայրենիների մէջ կարողանան տարածել զիտութիւնը, մարդասիրութիւնն և կարդ ու կանոնի հասկացողութիւնը: Իսկ ներկայ պայմաններում երկիրս մի այնպիսի վիճակի մէջ է, որ ապստամբութիւնները լեռնական ցեղերի մէջ սովորական բան են: Օրինակ, անցեալ տարի օգոստոս և սեպտեմբեր ամիսներում, Վանի հարաւային կողմերում լեռ-

նական ասորիները ապստամբւել էին, տեսնելով որ քրդերից իրանց հասցրած վասաների համար կառավարութիւնը ոչինչ չի անում: Երգումից զօրք էր ուղարկւած խաղաղացնելու ասորիներին և այդ դէպքի մասին խատիւ արգելւած էր խօսել, որպէս զի լուրը չը հասնի Եւրոպա...»

Ասորիների այն ցեղերը, որոնք ապրում են Հայաստանի հարաւարեկեան սահմաններում, Զուլամերկի մօտերքում և պարսկական սահմանի վերայ, գլխաւորապէս լեռնաբնակ խաշնարածներ լինելով, պահպանել են իրանց վայրենի, բիրտ և պատերազմասէր բնաւորութիւնը: Այդ նեստորականների հոգւոր-աշխարհական պետը, նրանց պատրիարքը, Մարմիմօնն է (տէր-Ակմօն), որ կենում է Զուլամերկի մօտ մի վանքում: Խակ Հայաստանի հարաւարեւմտեան սահմաններում ապրում է ասորիների մի այլ ցեղ, որ կրօնով և սովորութիւններով տարբերում նեստորականներից: Այդ յակորեանները (Եւտիքէսի վարդապետութիւնն են դաւանում) դաշտաբնակ ժողովուրդ լինելով, աւելի մեծ հակում ունին դէպի լուսաւորութիւնը և խաղաղ կեանքը. դրանք ունին մի առանձին պատրիարք, որ նստում է Զաֆիրատն վանքում, Մարդինէ քաղաքի մօտ:

Ասորիների մէջ կան և կաթոլիկներ:

Թէ նեստորականները և թէ յակորեանները ընդունում են Պօլսի հայոց պատրիարքարանի իրաւասութիւնը. Հայոց պատրիարքարանն է Բ. Դրան և ասորիների միջնորդը: Հայերի թշնամիները աշխատում են հեռացնել ասորիներին՝ հայերից և այդ երկու հարեւան ազգերի մէջ ատելութիւն սերմանել: Հայ առաջնորդների և պատրիարքների քաղաքական տակտից է կախւած պահպանել և արմատացնել հայերի և ասորիների մէջ համերաշխութեան գաղափարը:

Ասորիները Թիւրքաց-Հայաստանում գլխաւորապէս Բաղէշի և Վանի վիլայէթների հարաւային մասերում են բնակւած և նրանց թիւր Հայաստանում համնում է մօտ 50 հազարի: Ասորիները, չը նայած որ իրանց ծագումով ոչինչ կապ չ'ունին հայերի հետ, այնուամենայնիւ իրանց աշխարհայեցողութեամբ և ձգտումներով աւելի մօտ են հայերին քան քրդերը, որոնք, ինչպէս և պարսերը, թէ լեղուով և թէ ծագումով շատ մօտ լինելով հայերին և մի զենդիրանական ճիւղին պատկանելով հանդերձ՝ շատ հեռու են հայերից կրօնով,

ձգոռումներով և զարգացման աստիճանով։ Ուրեմն Թիւրքաց-Հայաստանում այժմ հայերին բարեկամ և մօտ կարելի է համարել միմիայն ասորիներին. և ուսումնասիրել նրանց կացութիւնը, ձգոռումները ու դրութիւնը՝ պէտք է լինի Թիւրքաց-Հայաստանի ապագայով հետաքրքրւողների գործերից մէկը, ինչպէս նրանց հետ ունեցած քաղաքական կապը պահպանելը՝ Պօլսի պատրիարքարանի պարտականութիւններից ոչ փոքրագոյնը։

(Կը շարունակուի)